

**ԱՍԼԱՆ-ԲԱԼԱՍԻ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու  
բարբառ (խոսվածք)**

Ըլել ա, չի ըլել ժամանակով մի թաքավոր. եղ թաքավորին ժառանգ չի ունեցել: Էղ թաքավորը օրերի մի օրը ճարը կտրած կանչում ա իրան նազըրին իրան կուշտը, դարդլամիշ ա ըլում իրեն գավակ չունենալու ցավը: Թաքավորն ու նազիրը մասլահաթ են անում, որ երկաթե տրեխ հագնեն, երկաթե գավագան վեր

ունեն, աշխար-աշխար ման գան, բալքա մի իլլաճ անեն, մի մարդ գտնեն՝ դարման անի թաքավորի դարդին:

Հարնախսա միտքն արին, դարվիշի շոր հագան ու ճամփա ընկան: Շատ գնացին, թե քիչ գնացին, էղ աստված գիտի, հասան մի մենձ գեղի. էղ գեղի դրաղին մի նախրչի կար, նախրչուցը դոնաղխանա ուզեցին:

Նախրչին ասավ.— Համեցե՛ք, դավրիշ բաբալար, փայ տվող աստվածը մի թիքա հաց էլ ձեզ հմա կլի պատրաստած:

Ասավ ու նախրչին դարվիշնուն տարավ տուն, օրթաօճախի դրաղին մի չուլ գձեց, համեցեք արավ նստեն, ինքը գնաց դուռը՝ իրան նախիրը հավաշարելու:

Նախրչու կնիկը գնացել էր աղբուրը՝ շուր բերելու, կուժը ուսին տուն էկավ, տեհավ իրանց տանը երկու դարվիշ նստած: Նախրչու կնիկը ճընանչեց, որ դրանք դարվիշ չեն, մինը թաքավորն ա, մինն էլ թաքավորի նազիրը:

— Վա յ,— ասավ,— ա յ մարդ, էս սրանց լա լեղական տեղն ա՞, որ էս չըլակտորի վրա էս նստացրե՛լ:

Ասավ ու թախտի վրա մի խալիչա գձեց, համեցեք արավ, ասավ.— Թաքավո՛ր, նազի՛ր, համեցեք, նստեցեք խալիչի վրա:

Թաքավորը ըրմացավ, թե. «Էս նախրչու կնիկը որդիա՞ն գիտի, որ էս թաքավորն եմ»: Ըծու թաքավորն ասավ.— Քիրա՛, դու ի՞նչ գիտես էս թաքավորն եմ:

Նա ասավ.— Խի՞ չգիտեմ, դու փլան թաքավորն ես, հիշատակ չունես, աշխար-աշխար ման էս գալի, որ մի մարդ ռաստ գա, քու դարդին դարման անի:

Եղնա նախրչու կնիկն ասում ա.— Քու դարդին էս դարման կանեմ: Ռավոտը որ ծեգիլահան վեր կենաս, հաց ուտես, ճամփա ընկնես, ոնց որ կասեմ նըհե կանես, մի տարեն վրա թաքավորի կնիկը տղա կբերի:

Թաքավորը ռազի կացավ, նախրչին էլ մի մոզի մորթեց, էղ ըիգունը խորոված արին, բղլամա արին՝ կերան, ըծու քնեցին: Ռավոտը ծեգիլահան թաքավորն ու նազիրը վե կացան, հաց կե-րան, ճամփա ընկան:

Էն վախտը նախրչու կնիկն ասավ թաքավորին.— Էս ճամփեննի կերթաս, էն դադար կերթաս՝ էս սարի գլուխը դուս կըլես. սարի գլխին, աղաքդ մի խնձորքի ծառ կգա, էն ծառի վրա էրկու խնձոր կա, էրկու խնձորը կպոկես, կտանես մինը դու կուտես, մինը՝ թաքավորի կնիկը: Իննը ամիս, իննը օր, իննը սհաթը որ թամաի՛ թաքավորի կնիկը մի տղա կբերի, ընդով ինչ ուզում էս՝ ինձ խալաթ կդարգես:

Նազիրն ու թաքավորը շատ շնորհակալ կացան թե՛ նախրչուցը, թե՛ նախրչու կնգանիցը: Մի բուռ ոսկի էլ բախշեցին նախրչու կնգանը, մնաս բարով ասին ու ճամփա ընկան:

Ըծու ճամփումը նազիրը թաքավորին ասավ.— Թաքավո՛րն ապրած կենա, նախրչու կնիկը իմաստուն էր, էն խըտըտին էլ մի ըխա կար, էն տղա ըխեսն որ մենձանա՝ քու թախտը քարուքանդ պտի անիլ:

Թաքավորը ըրմացավ, ասավ.— Դե լա՛վ, հլա մի գնանաք տենունք նախրչու կնգա ասած խոսքը թե դրզվի, ես էդ ըրեխին թե սաղ թողամ, նա էլ իմ թախտը թող քարուքանդ անի:

Ասին ու գնացին: Շատ գնացին, թե քիչ՝ հասան էդ խնձորքու ծառին տեհան որ դուզգուն նախրչու կնկա ասածի պես և խնձորքու ծառի վրա երկու խնձոր կա. պոկեցին, ու թաքավորը ջերումը դրեց, ուրախ-ուրախ ճամփա ընկան դրբա թաքավորի ամարաթը:

Թաքավորը, ըմարաթը հասնելուն պես, ջրիցը հանեց խնձորներու մինը, տվուց կնկանը, մինն էլ ինքը վեր կալավ, երկուսն էլ կերան խնձորնին: Դուզգուն իննը ամինը, իննը օրը, իննը սահաթը թմամելուց եղը թաքավորի կնիկը խտոր ընկավ՝ մի սիրուն տղա բերուց: Ըծու թաքավորը շատ ուրախացավ: Եղնա մտքումը դրուց, որ նախրչու տղին փչացնիլ տա: Էնա երկու մարդ կանչեց, մի դաթրի բեռը ոսկի շինեց, տվուց էդ մարդկերանցը: Ասավ.— Էս դաթրի ոսկին կտանեք փլան գեղը, փլան նախրչուն կտաք, եղնա կասեք, որ թաքավորը ձեզանե շատ ռազի ա ըշխարովը մին, էս ոսկին էլ նախրչու կնկա հմա խալաթ ա դրկել, ու ասավ, որ ձեր պուճուր տղին էլ դրկեցեք ըստեղ, էս պահեմ, հաց ու ջուր տամ, մենձացընեմ, եղնա շկուլը դրկեմ՝ մոնթերի հետ կարդա:

Նախրչին ոսկին որ տեհավ, շատ ուրախացավ: Կնիկը որ տեհավ ու թաքավորի բսպարանքը իմացավ՝ տխրեց, չունքի իմաստուն էր, հըսկացավ, որ իրան էրեխի գլուխը բալբալեք պտի բերի: Հոժարացավ ոչ նախրչու կնիկը: Ասավ.— Ես իմ բեխին թաքավորի տունը չեմ դրկի, թեկուզ ինչ ուզում ա անի:

Նախրչին ջգրվեց կնկա վրա.— Ղանմա՛գ, դանմագի ճուտ, թաքավորը քու բեխին տանում ա իրան ամարաթը, որ իրան տղի հետ կարթա, էն էլ դու դաբուլ չես կենո՞ւմ: Ընդուր էն ասել՝ բոշիցը փաշա չի ըլի, է՛ :

Եղնա նախրչին կնգանը անգաջ չարավ, գոռով տղին դարկեց թաքավորի ամարաթը: Դու մի ասիլ թաքավորը էդ տղերանցը թամբա էր արել թե.— Նախրչու ըրեխան, որ բերելիս ըլեք. ճամփումը մորթեցեք, արնոտ շորերը բերեք իմ կուշտը, ձեզ մենձ խալաթ կտամ:

Դե, ձեզ մատաղ ըլեմ, էն ինչ ասել են, թե՛ ասծու պահած գառը գելն ուտիլ չի, էդ տղերանց սիրտը աստոճը խնամք ա գձում, դրանք դիմիշ չեն անում՝ էդ էրեխին մորթիլ. միտք են անում ու իրուր ասում.— Ադա՛, հըմի էս քորփա նըբալուղը մեզ ի՞նչ ա արել, որ սրա մեղքի տակն ընկնենք. չիմուց լավն էն ա, որ գնանք մի գառն առնենք, բերենք մորթենք, էս բեխի շապիկը գառան արնումը թըթախենք, տանենք տանք թաքավորին, ըրեխեն էլ էս ճամփի դրաղին նստած թողունք, ինչ կըլի՝ կըլի, հըլբաթ մի աստծասերը կըլի, վի կունի, կտանի կպահի: Էն մի հընգերն ասավ.— Ադա՛, էդ ի՞նչ լավ բան միտքն արիք, թաքավորը ի՞նչ գիտի, թե էդ շապիկը բեխի արնոտ ա, թե գառան արնոտն ա, համ փորներս վեց-վեց ա անում կկշտանա, համ էլ էս մեղքի տակը չենք ընկնիլ: Ասին ու ըթենց էլ արին:

Հարնասիա՛ աղեքիս արգ ունեմ, ըրեխին ճամփու դրաղին թողում են նստած, իրանք ճամփա են ընկնում, գնում հասնում թաքավորի ամարաթը: Արնոտ շապիկը տանում են տալի թաքավորին: Թաքավորը դրանց մենձ խալաթ ա տալի, իրանց էլ լավ դուլլուղի դնում, եղնա ինքն իրան-իրան իր միչումը փընթփընթում. «Դե՛ հըմի նախրչու տղեն թող իմ թախտը քարուքանդ անի »:

Էս թաքավորին ըստեղ թողանք, խաբարը ումնի՞ց տանք՝ նախրչու տղից: Նախրչու տղեն էլ էն մերու միչին, վեր-վերանա տեղը մի ճամփու դրաղի նվում ա նվո՛ւմ. տեր չկա, տիրական չկա: Գեջղանգեջ մի ասլանի ընգաջովն ա ընկնում մի ջուռա նվոց: Էդ նվոցի վրա ասլանը գալիս ա, ի՛նչ տենում՝ մի քորփա նըբալուղ ճըմփի դրաղին վեր ընկած, հըրեն նվում ա: Մեղքը տալիս ա, դա իրան ծիծը քաշում ա էդ նըբալուղի բերանը: Խեղճ քորփեն ընդեղ սոված, երկու-իրեք օր մնացած ա ըլում, ասլանը ծիծը բերանը քաշելու հատաղ ուզում ա ասլանի ծծերն էլ

կուլ տա: Խալարիսա՝ ըրեխեն որ ծծով կշտանում ա, ասլանը էդ ըբխին վեր ա ունում տանում իրան տունը, իրան ճուտի կուշտը՝ էդ ըբխեն էդ ասլանի ճուտի հետ մենծանում ա: Կոները հաստանում, մատները դառնում ամեն մինը մի բիլակիս պես, թիկունքը ոնց որ մի հարիր տարեն կաղնքի ծառի քոթուկ, ձեռը ինչ ծառը գցելիս ա ըլում՝ տըկոսպոկ անելիս ա ըլում: Ախր գիտե՞ք, ասլանի կալթն ա կերել, է՛: Հըմի ինչ թավուր հիվանդ որ մի ստաքան ասլանի կաթ խմի՝ նա էն հաղաղը կսաղանա: Էն ինչ ասել են՝ անմահական կաթը, էն ասլանի կաթն ա: Հարնախսա՝ էդ արանքովը անց ա կենում տաս, տասնհինգ տարի, նախըջու տղեն էդ ասլանի ճուտի հետ մենծանում ա, դառնում ա ոնց որ մի սար: Դե գիտեք, էլի՛, ապերք ջան, էն նախըջու տղի հետ խոսող չի ըլել. գաթի խոսիլ էլ չէր գիդենալ, նրա կշտին հաց չեն կերել, նա էլ հաց ուտիլը գիտեր ոչ, հարնախսա՝ նա ասլանի հետ մենծացել էր, ասլանն ի՛նչ ուտեր, նա՛ էլ էն ուտեր:

Օրերի մի օրը թաքավորը իրան ամարաթի չարդախումը կաղնած տուրբինդը աչքերին էր դրել, թե տենա՝ սարերի գլխին ի՞նչ կա, ի՞նչ չկա: Մին էլ էն տեհավ՝ մի ասլան, ասլանի հետ էլ մի իսանի նման վերու մարդ, մագումը կորած՝ իրար դունչ են լիզում:

Թաքավորը արմացավ, ասավ.— Էս ի՞նչ տեսիլք ա, որ տենում եմ, ես որ էդ վերու մարդին բռնիլ չտամ, իմ թաքավորութիւնը պարապ ա:

Էն հաղաղը, աղենուս արգ անեմ, հրաման ա անում մենծավորնուն, դոշուննուն, որ. «Էս սարի չորս կոնուց ծեփ արեք ու սուրագ արեք: Էնդդար դոշունը իրար մոտանա սուրագ անիլեն, որ դու՛ն էլ արանքներիցը չփախչի, չկելը իմ տեհած իսանի նման ջանլուին բռնեն»:

Դե՛, ձեզ մատաղ, գիտեք, էլի՛, թաքավորի հրաման ա, ով ա գլխիցը ձեռը վի կալել, որ նրան ընդիմանա: Էն ա դոշունը՝ որը նետ, որը աղեղ, որը թուր, վերջը՝ ես ինչ գիտեմ, հազար ու մին կոնիլ անելու երագ, վեր են ունում ու էդ սարի չորսի կուռը ծեփ անում: Էնա սուրագ անելեն ասլանը մին էլ էն ա տենում, որ իրանք մնացել են դափանգի մեջը: Էն ա ասլանն ասում ա.— Է՛, իսան օղի<sup>1</sup>, թե իմ կաթը կերել ես, ճղում եմ, անց կենում, դուն էլ ճղի, ինձ հետ անցկացի: Ասավ ու ասլանը թռավ, տուր թե կտաս դոշունի կես տեղը, ըվատա հզար մարդ իրար գլխի ջարդ ու փուրթ էլան: Վերու մարդն էլ դրա եղնուց ճղեց, որ անց կենա, բնատեննին բերին, դրա չորս կոնովը փրթաթեցին. Էնա դե՛, թաքավորի փորացավն էլ դա էր, էլի՛. դրան բռնեցին, վեգցեցին, որ մոնչեր ո՛չ՝ գետինը ժած գեր:

Հարնախսա՝ էդ վերու մարդին բռնեցին, տարան թաքավորի կուշտը: Թաքավորը շատ ուրախացավ, իրան դոշունին գովեց ու փող բախշեց, էդ իսանի նման վերու մարդին էլ տարան գցեցին մի օթախ: Թաքավորի տղեն էկավ թմաշա արավ էդ վերու մարդին, եղնա հորը դանչանք արավ, թե. «Թաքավորն ապրած կենա, ես քեզ միննաթ եմ անըմ, էս վերու մարդի իրավունքը ինձ տաս, ես սրան տանու կանեմ: Խոսալ կսովորցնեմ, մեզ պես հաց ուտել կսովորցնեմ, օրինավոր նստել, վեր կենալ կսովորեցնեմ»:

Դե գիտեք, էլի՛, թաքավորի էլ աչքի սև ու սիպտակը էդ մինուճար տղեն էր, խաչով, խունկ ու մոմով ճարած, ուզաց ոչ իրան մինուճարի սիրտը կոտրի:

Ասավ.— Դո՛ւ գի՛տես, ա՛յ տղա ջան, դրա իրավունքը քի իմ տալի:

Էնա՛, աղեքիս արգ անեմ, էդ սրհաթը թաքավորի տղեն էդ վերու մարդին առնում ա դնում ու ասում.— Չունքի դու ասլանի հետ ես մենծացել, ասլանի էլ կաթը կըլես կերած, ըհր՛, քու անումը դնում եմ՝ Ասլան-բալասի<sup>2</sup>:

(Ըստի հեքիաթ ասողը մի չիբուխ ա քաշում):

1 Մարդի որդի — Օ. Բ.:

2 Կորյուն, առյուծի ձագ — Օ. Բ.:

Աղիս արգ անեմ, էնա էդ թաքավորի տղեն էդ թագա Ասլան-բալասուն տանում ա իրան օթախը, իրան դայդի շոր հագցնում, հացի անումը սվորցնում, եղնա ուտելը սվորցնում. էն դայդի ջրի անումը սվորցնում, հարնախսա՝ գլուխներդ ի՞նչ ցավացնեմ, ըշխարքումս ինչ դղար որ քան կա, չիմնու անումն էլ սվորցնում ա:

Ըծու գնում ա թաքավորի կուշտը, ասում ա.— Թաքավորն ապրած կենա, էն Ասլան-բալասին հըմի դայդումը խոսալ գիտի, դայդումը նստել վի կենալ գիտի, հընենց որ ամեն քան սվորըցրել եմ: Իրան էլ հըվատացրել եմ, որ ես ու ինքը ախպեր ենք: Հըմի ուզում ես, թաքավորն ապրած կենա, քու նագիր-վեզիրներիդ, մենձավորներին, չիմուն էլ կանչի՝ դոնախ արա մեր տունը, Ասլան-բալասուն չիմնու հետն էլ ճանաչացրենք:

Թաքավորը տղի խոսքին շատ հվանում ա. էնա տղին ասում ա.— Էսօր թղարեքը տենանք, էքուց Ասլան-բալասուն դուն

տուն կբերես. ես էլ կանչիլ կըտամ մեր մենձավորներին:

Էնա էքսի օրը չիմն էլ թոփ են ըլում թաքավորի ամարաթը, Ասլան-բալասուն էլ տանում են ընդեդ, որտեղ որ թաքավորը դիվան ա անում, էն վախտը ընդի դեռ օքմին, չի ըլում էկած, մենակ Ասլան-բալասին ու թաքավորի տղեն են ըլում:

Թաքավորի տղեն ուզում ա գնա հոր կուշտը, Ասլան-բալասուն ասում ա.— Ասլան-բալասի ջան, ես գնում եմ թաքավորի ամարաթը, դու ըստի կաց, ինչ քանի ուզում ես ձեռը տու, էս փաթերեթին<sup>3</sup> ոչ ձեռը տաս, ոչ տեղիցը վեր բերես, որ թաքավորը տենա՝ շատ կբարկանա:

Ասլան-բալասին էլ ասում ա.— Շատ լավ կըլի, ախպեր ջա՛ն, ձեռը չեմ տալ:

Եղնա թաքավորի տղեն որ գնում ա, Ասլան-բալասին փիքրն ա անում. «Էրնեկ գիտենամ, թե թաքավորի տղեն էդ իսի՞ ասեց, թե էդ փաթերեթին ձեռը չտաս, վեր չունես, հլա վեր պըտի ունեմ, տենամ ի՞նչ թավուր փաթերեթ ա»:

Միտքն արավ վեր բերուց, էն հադաղը թաքավորը տուն մտավ: Թաքավորը տենալուն հադաղ շատ ջգրվեց: Ասլան-բալասին էլ, գիտեք էլի՛, չուլումը մենձացած օքմին, դեռ գզիրի ձեն չլսած, նա ո՞նչ գիտեր թաքավորն ի՞նչ ա, բըթումն էլ կար, քիչ մնաց որ թաքավորին ոտնատակի:

Ասավ.— Ահա՛ քու փաթերեթը, կերել չեմ, մերել չեմ, ձենդ կտրի, թե չէ՝ էս սըհաթին թախտդ ու ամարաթդ քարուքանդ եմ անում:

Էդ դալմադալին վրա տուն ա գալի թաքավորի տղեն, հորը դնամիշ ա անում, Ասլան-բալասուն էլ մի դայդով արխեյնացնում ա, որ.— Ասլան-բալասի ջա՛ն, իմ հերը քի ճընանչել չի, հենց գիտացել ա ուրիշ մարդ ես, ջըգրվել ա:

Ըծու Ասլան-բալասին քաղաքավարի թաքավորին մեղա ա գալի, եղնա ասում ա.—

Թաքավորն ապրած կենա, էդ փաթերեթը քու ի՞նչն ա, որ թողում չես ձեռը տան:

Թաքավորն էլ նրան մին-մին պատմում ա, թե. «Էդ փաթերեթը քանի տարի ա ես սիրել եմ. դա օխտը աժդահա ախպեր ունի, ինչ դղամ, որ դոշուն եմ տանում, չիմնուն էլ ջարդում են, կարում չեմ, որ ինձ հմա բերեմ: Իլլաճս կտրել ա, նրա փաթերեթը քաշիլ եմ տվել, փաթերեթովը ավասս առնում եմ»:

Էնա Ասլան-բալասին էդ խոսքը իմանալուն հադաղ՝ թաքավորին ասում ա.— Թաքավորն ապրած վենա, էդ ա դու մենձացել ես, թե իրավունք կտաս՝ էքուց նեթ ախպորս վեր ունիմ, գնամ իմ ախպորս հմա էդ ըխչկանը բերեմ:

Թաքավորի իւելքը մի կոծի մնաց, որ գլխիցը թռչի, ասավ.— Ասլան-բալասի ջա՛ն, ես ի՞նչդղամ որ դոշուն եմ տարել, էն անիրավ տնաքանդնին չիմնուն էլ ջուրն են մաղել, դու ո՞նց պտիս բերիլ էն ախչկանը:

Ասլան-բալասին ասավ.— Թաքավորն ապրած կենա, ես ասլանի կաթն եմ կերել, էն կաթը ինձ հարամ կըլի, որ ես կարենամ ոչ էդ ախչկանը բերեմ:

Թաքավորը շատ ուրախացավ, ասավ.— Ասլան-բալասի ջա՛ն, իմ խազնու դուռը քեզ հմա բաց ա, ինչքան ոսկի ուզում ես վի կալ, ինչքան դոշուն ուզում ես վի կալ, թաք էդ ախչկանը կարենաս բերես:

Էնա Ասլան-բալասին էլ թաքավորի ջուղաբը տալիս ա, թե.— Թաքավորն ապրած կենա, ինձ ո՛նչ ոսկի ա պետքը, ո՛նչ դոշուն, էնա քունն էն ըլի, որ ինձ հմա մի երկաթե գուրգ շինել տաս, էրկու իմ բոյին, խլալընքիս հաստութանը, որ ձեռիս բռնեմ ու գնամ իմ ախպոր հետ:

Թաքավորը ռազի կացավ, էն սհաթը կանչել տվուց դարբնուն, հրաման արավ, որ Ասլան-բալասու հմա մի մենձ գուրգ շինեն:

Էքսի օրը մի ձի թաքավորի տղի հմա բերին, մինն էլ Ասլան-բալասու: Թաքավորի տղեն իրան ձին նի էլավ, Ասլան-բալասուն էլ ասավ.— Ախպեր ջա՛ն, էդ ձին քի հմա ենք ռախտել, դու էլ դրան նի ի՛լ, գնանք:

Ասլան-բալասին ասավ.— Ախպեր ջա՛ն, էս ձեր բերած ձին իմ գուրգը կարալ չի՛ տանի, ինձ ո՞նց տանի, դու քու ձին քջի գնա, որ կոտան վրա որ գնալ պտենք, էս էլ քու եղնա կգամ:

Էնա աղեքիս արգ անեմ, Ասլան-բալասին ու թաքավորի տղեն գնում են, հասնում են Դունյա-գյոզալի օխտն ախպոր ամարաթի աղաքը: Եղնա Ասլան-բալասին ասում ա իրան ախպորը.— Ախպեր ջա՛ն, դու մեր ձիու կշտին կաց, վախես ոչ, էս հալա մի գնամ սրանց ամարաթը, տենամ ըստի ո՛վ կա, ի՛նչ կա, ի՛նչ չկա:

Էնա Ասլան-բալասին վեր ա կենում, գնում, մտնում ա էդ ամարաթը: Էդ ամարաթի միջին մի ախչիկ ա տենում, մի սիրուն, հուրի-մալաք ախչիկ, որ արևին ասում ա դու դուս մի գալ, էս աշխարքին լիս կտամ:

Է՛, նանդ մեռնի, Ասլան-Բալասի. ախչիկը դրան տենալուն պես ասում ա.— Իսա՛ն, իսան-օղլի՛, օձը իրան պորտովը, դուշը իրան թևովը իմ ախպորտանց ահիցը էս սահրաթովը չեն կարում անցկենան, դու քանի՞ գլխանի էս, որ էկել էս:

Ասլան-բալասուն էլ, դուք խո գիտեք. էդ խոսքերի տակը մնացողը չէր, ասավ.— Աննման, սիրուն ախչի՛կ, էս փլան թաքավորի տղեն էմ, որ քանի հետ դոշունով էկել էր, որ քեզ տանի, կարացիլ չէր: Չըմի էս նրա տղեն էմ, էկել էմ իմ ղվաթիս գոռովը քեզ իմ ախպոր հմա ուզեմ, մարդի մարդանա ասում էմ ձեզ, թե ընդիմացաք՝ էս սարերը ձեր գլխին փուլ կածեմ: Չուստ արա, ախպորտանցդ իմաց տուր որտեղ էլ որ էն, որ գան, էս քեզ նամարդութենով տանողը չեմ:

Էս խոսքերի վրա Դունյա-գյոզալի սիրտը մի քիչ էր մնացել, որ պատռի:

Ասլան-բալասին ասավ.— Աննման, սիրուն ախչիկ՛, վախիլ մի, էս քեզ ձեռ տվողը չեմ, դու քու ախպորտանցը ինձ շանց տուր:

Դունյա-գյոզալի լիզուն, որ վախիցը կպել էր քիմքին, բացվեց, սիրտ արավ, խոսաց Ասլան-բալասու հետ, ասավ.— Իմ ախպերտինքը Օխտը սարի քամակին քառասուն դևի հետ կոծիլ են տալի, էս օխտը տարի ա, նրանք ուզում են, որ գան ինձ փախցնեն, հրես էս բարդանի ջվալի հացն էլ էրեկ միջնեկ ախպերս գալ պտեր, որ տանի, հմա էկավ ոչ, հլբաթ նրան մի բան ա պատահել:

Էնա Ասլան-բալասին տեղիցը վեր ա թոշում, ասում ա Դունյա-գյոզալուն.— Աննմա՛ն, սիրուն ախչի՛կ, արի ինձ քու ախպորտանց սամթը շանց տուր, էս իմ ախպորը թողնում էմ քեզ մոտ, իրար հետ կկենաք, հընչկել էս գնամ քու ախպորտանցը քումակ անեմ, դևերին ջարդեմ, նրանց կամքովը գամ քեզ իմ ախպոր հմա ուզեմ:

Ասավ Ասլան-բալասին ու բարդանի ջվալը գցեց գուրզի ծերը, դրուց ուսին.— Մնա՛ք բարի՝ չքել իմ եղ գալը,— ասավ ու ճամփա ընկավ:

Ասլան-բալասին գնում ա, գնում, Օխտը սարի գլուխը բնցրանում, մտիկ ա տալի, տենում ա, որ դներն ու օխտը ախպերը կովել են, բեզարել, հըմի դինջանում են:

Միտքն ա անում, թե. «Ի՞նչ անեմ, տեր աստո՞ծ, թե քիչվորի կուռը գնամ, շատվորը կասի՝ գոռոզութին արավ, թե շատվորի կուռը ընկնեմ, ախրը քիչվորը կասի՝ մթամ նրանք քիչ են, մինն էլ ավելացավ: Լավն էն ա գնամ բարով տամ, որ կուռը չուստ բարովս կառնու, ջուղաբս կտա, նրա կուռը կընգնեմ»:

Ասավ ու գնաց. Գնաց օրթալըղումը կաղնեց.— Բարի աջողո՛ւմ ձեզ,— ասավ: Օխտն ախպերը չուստ ասին.— Աստծու բարին քե՛զ:

Բարդանի ջվալը տարավ նրանց աղաքին վեր դրուց, օխտն ախպերը մնացին ըրմացած.—

Ախպե՛ր,— ասին,— էս ջվալը մերն ա, էս հացը մերն ա, բա էս մարդն ո՞վ ա:

Եղնա Ասլան-բալասին ասում ա օխտն ախպորը.— Ես ֆըլան թաքավորի տղեն եմ. էկա, որ ձեր քիրը ուզեմ իմ ախպոր հմա. էկա տեհա, որ դուք կռիվ էք էկել դների վրա, ձեր պաշարն էլ ջվալում լիքը ընտեղ դրած էր: Ես ուզեցի ոչ, որ նամարդութենով ձեր քիրը տարած ըլեմ, էկա մարդի-մարդանա էս դների հետը կովեմ, սրանց կըտորեմ, իմ հունարն էլ ձեզ շանց տամ, եղնա գնամ ձեր քիրը տանեմ: Հմի դուք հաց կերեք, էս էս դների հետ մի քիչ գրից անեմ:

Էնա Ասլան-բալասին ասում, գուրզը վերառնում, աղաք գնում.— Է՛յ դներ, դուք ինձ չարչարեցիք, քարեքար գձեցիք, էս էկա, որ Դունյա-գյոզալին իմ ախպոր հմա ուզեմ, էկա տեհա, որ նրա ախպերտիները էս Օխտը սարի քմակին ձեզ հետ կռիվ են անում: Հմի էս էկել եմ, օր սրանց հաշիվը ձեզ հետ վերջացնեմ: Մի ջան՝ էս, քառասունը՝ դուք, մեյդանն էլ մենձ, ով դոչաղ ա՝ դուս գա, ահա իմ գուրզին դուրբան ըլի:

Դները տեհան թե չէ, գոռոզի պես մինը-մնի եղնուց վրա թափեցին Ասլան-բալասուն: Հըմա չիմն էլ Ասլան-բալասու գուրզին դուրբան էլան: Գուրզը քաշեց կտորեց, ջարդեց, ալիր-աղցան արավ: Եղ մտիկ արավ, որ օխտն ախպերը վեր կացած փախչում են:

Ասլան-բալասին դրանց քամակիցը ձեն տվուց.— Չե՛յ, վախլուկ անեյթիպարնի՛, ո՞ւր էք փախչում:

Օխտն ախպերը են սրհաթը ետ դառան ասին Ասլան-բալասուն.— Փախչում չենք, ախպեր ջա՛ն, ըստեղ ենք:

Ասլան-բալասին ասում ա.— Դե՛, էկեք դինջանանք ըստեղ: Սրա՞նց հետ կովելիք, թե էլ դներ կան ձեզ հետ կովող:

— Չե՛, — ասում են,— ախպեր ջա՛ն, մենակ սրանք էին մեզ հետ կռիվ անողնին:

Եղնա նստում են, Ասլան-բալասու հետ օխտը ախպերը հաց ուտում, դինջանում:

Թող դրանք ըտի հաց ուտեն, խաբարը տանք թաքավորի տղիցը:

Թաքավորի տղեն ու Դունյա-գյոզալը էդ օրը իրուր հետ գրից են անում, իրար բրդազզի են տալի, եղնա ճաշի վախտը Դունյա-գյոզալը գլուխը դնում ա թաքավորի տղի գոգումը, թե. — Ըսենց քիչ քնեմ:

Թաքավորի տղեն տենում ա, որ Դունյա-գյոզալի հուսքի տակին բանալիքներ կան. միտքն ա անում, ասում ա. «Հազիր սա քնած ա, հըլա էս բլանիքնին վեր ունեմ, էս փակած դոները բաց անեմ, տենամ էս օթախնում ի՞նչ կա»:

Հարնախսա՛ թաքավորի տղեն կամանց բալանիքնին հանում ա Դունյա-գյոզալի հուսի տակիցը, գլուխը կամաց վեր դնում բարձի վրա, մի դուռը բաց անում, տենում ա ինչ թավուր աստծու կրակ ասես, էդ տանը կա. ուզում ա, որ էն մեկել դուռն էլ բաց անի, գնում ա էն էլ բաց անում՝ էն էլ նրա պես կրակովը լիքը: Հարնախսա՛ գլուխներդ ինչ ցավացնեմ, օխտը դուռն ա

ըլում իրար միջի, վեցն էլ բաց ա անում, վրա օխտը որ բաց ա անում, տենում ա մի դև ժնջըլներով կապած, ընտեղ մոնչում ա: Դեր թաքավորի տղին տենում ա թե չէ, ասում ա.— Իսա՛ն, իսան-օղլի՛, աստծու խաթեր հմա էն տաշտի ջուրը մոտիկ դի՛ր խմեմ:

Թաքավորի տղեն ջուրը մոտեցնում ա դևին, դեր մի կումով ջուրը խմում ա, դվաթ ա գալի տամարնին, մոնչում ա, կապած ջնջիլը հարիթ տեղից կտրատում, վեր կենում թաքավորի տղին մի լավ սիլլա տալի՝ թաքավորի տղեն վեր ա ընկնում, նըվաղում, դեր գնում ա, Դունյա-գյոզալին վեր ունում ու փախչում:

Թող դեր Դունյա-գյոզալին փախցնի, թաքավորի տղեն էլ ընդի նվաղած մնա, մենք խաբարը տանք Ասլան-բալասուց ու օխտն ախպորից: Օխտն ախպերն ու Ասլան-բալասին հաց են ուտում վերջացնում, վեր են կենում իրար հետ դայդումը գրից անելեն տուն գալի:

Գալիս են ի՛նչ տենում՝ ոնչ Դունյա-գյոզա՛լն ա ընդի, ո՛նչ թաքավորի տղեն: Տենում են օթախների դռները բաց: Դրանք օթախներն են մտնում ու ման գալի: Գնում են տենում, որ թաքավորի տղեն նվաղած վեր ընկած, տուտսազ արած, դևն էլ՝ փախած: Ըտեղ թաքավորի տղի երեսովը ջուր են տալի, նվաղած տեղիցը եղ բերում, իմանում են ամեն բան, թե ինչ ա էլել: — Է՛,— ասում են,— Ասլան-բալասի, ձեր բանը խարաբ ա էլել, էս իրեք տարի ա եղ դևին մենք տուտսազ ենք արել: Դա էկել էր, որ մեր քիրը փախցընի, հըմի քու ախպերը ջուրը մոտեցրել ա, նա ջուրը խմել ա ու դվաթը տեղն ա էկել, ջնջիլնին կտրել ա ու Դունյա-գյոզալին փախցրել: Ասլան-բալասին ասում ա.— Դուք մենակ ինձ նրա տեղը շանց ավեք, էս իմ մոր կաթը չեմ կերած ըլիլ, որ Դունյա-գյոզալին եղ չբերեմ:

Օխտն ախպերը շանց են տալի Սև ու Սիպտակ ծովի արանքումը դևի տեղը:

— Թե կարաս,— ասում են,— հունարդ բանացրու, գնա, բի՛:

Ասլան-բալասին ասում ա.— Իմ ախպերը ձեզ ամանաթ, դուք՝ աստծուն, էս գնում եմ քառասուն օրով: Դունյա-գյոզալը որ գետնի տակին էլ ըլի, պետք ա գտնեմ ու բերեմ: Դուք իմ ախպորը լավ պահեցեք, չքել իմ գալը: Չըլնիմ, չիմանամ, որ դրան դուք քորուղ տաք, կգամ էս էս սարերը ձեր գլխին քարուքանդ կանեմ:

Օխտն ախպերը ասում են.— Գնա՛, ախպեր ջա՛ն, տերը քեզ հետ, մենք քու ախպորը մեր աչքի լսիցը լավ կպահենք:

Ասլան-բալասին գուրզը վեր ա ունում ու ճամփա ընկնում դրբա Սև ու Սիպտակ ծովեր ու օրթաղը: Էլ քշեր ու ցերեկ չի ասում, մի գլուխ ճամփա ա գնում: Գնում ա տեղ ա հասնում, տենում ա, որ Դունյա-գյոզալը դևի ամարաթից դուս էկավ: Ասլան-բալասին գուրզը ձեռին աղաք ա գնում, Դունյա-գյոզալին բարով ա տալի ու ասում ա, որ.— Էկել եմ քեզ տանեմ. դեր ո՛ր ա, տեղը շանց տուր, գնամ գրգովս կտոր-կտոր անեմ, որ եղ անիծածը էլ մեզ փորձանքի չբերի:

Դունյա-գյոզալը նրան ասում ա.— Ասլան-բալասի ջա՛ն, իմ ախպերտինքը նրան հարիթ անգամ կտոր-կտոր են արել, հմա էլ եղ սղացել ա, նրան սպանելու ճար չկա. թե հնարք գիտես, ուրիշ հնարք արա:

Ընդով Ասլան-բալասին ասում ա Դունյա-գյոզալին.— Եփ որ ըտենց ա, առաջ մենք դրա ֆոքու տեղը պետք ա սովորինք: Դու ըսե կանես. նա որ գա, դու լաց կըլես, կասես թե. «Օխտն օր գնում էս կորչում, օխտն օրից եղը գալիս էս, օխտն օր քնում, էլ ետ վի կենում կորչում էս, էս մնում եմ էս չորս պատի ըրանքումը մեն-մենակ, հետս խոսող չկա, ինձ մի ումուտ սովող չկա: Էսա էս քունն եմ, դու՛ իմը, քու ֆոքու տեղն էլ ա ինձ շանց տու, որ նրա հետ գրից անեմ, ըստեղ մնամ ոչ մենակ, ողորմելի»: Էն վախտը նա իրան ֆոքու տեղը կասի, որտեղ որ էլ ըլի, էս կերթամ էն օխտն օրումը կբերիմ, եղնա դրան կտոր-կտոր անիլը հեշտ ա:

Դունյա-գյոզալը խոսքը տվուց, որ ըտեհնց անի, Ասլան-բալասուն տարավ պահեց, որ դեր տենա ոչ, ինքն էլ գնաց դևի ամարաթը:

Դեր էկավ իրան վախտին, հաց կերավ ու ուզեց որ քնի, Դունյա-գյոզալը դևին ասավ.— Հըմի ես քունն եմ, դու իմը, ինձանից ինչ ես ուզում թաքցրնես, ախր դու օխտն օր գնացած ես մնում, եփոր էլ գալիս ես՝ օխտն օր էլ քնում ես, ես մնում եմ մենակ բուբուլի պես: Ես քեզ դանչանք եմ անում, որ քու ֆոքու տեղն էլ ա ինձ շանց տու, որ գնամ նրա հետ գրից անեմ: Դեն ասում ա.— Լավ ես անում, եփոր ըտենց ա, իմ ֆոքին հրե ֆլան սարի տակին մի տասներկու ոտը նարդիվան կա, էն նարդիվանու վերի ոտի տակին դրած մի դուրթիկ կա, էն դաթու մեչն էլ իրեք ծիտ կա, նրանք իմ ֆոքիքն են, թե կարաս՝ գնա նրանց գտի, նրանց հետ գրից արա:

Ասում ա դեր ու խորը քնում: Դու ո՛նչ մեռնիս, թե նա կգարթնի: Դունյա-գյոզալը գնում ա Ասլան-բալասու տապ արած տեղը, եղնա նրան ասում.— Ասլան-բալասի ջան, բա ասիլ չես, էդ ստանի թաքավորը իրան ֆոքու տեղը ասեց, ֆլան սարի տակին տասներկու ոտը նարդիվան կա, վերի ոտի տակին մի դուրթիկ կա, էն դուրթիկի միջին իրեք ծիտ, էն ծտերը նրա ֆոքին են, հմի թե իլլաճ ունես՝ տե՛ս:

— Դե լա՛վ,— ասավ Ասլան-բալասին,— կերթամ ու, որդի էլ որ ըլի, դրա ֆոքին կգտնեմ, կբերեմ:

Ասում ա ու ճամփա ընկնում: Հարնախսա՝ շատ ա գնում, թե քիչ, հասնում ա դևի ասած սարը, գտնում ա տասներկու ոտ նարդիվանը, վերի ոտը քանդում ա, տակին մի կոծոլ դուրթիկ ա դուս գալի, բերանը մի կոծի բաց ա անում, որ հրես միջին իրեք ծիտ կա:

— Հը մ,— ասում ա Ասլան-բալասին,— անիծված դև, ֆոքիդ հըմի ձեռիս ա, էլ դու կարալ չես ինձանից պրծնել:

Դուրթիկը վեր ա անում Ասլան-բալասին, ճամփա ընկնում

դըբա դևի ամարաթը: Ճամփումը ծտերի մեկի ճիտը պոկում ա, դեն գցում, դեր ընդի քնատեղիցը զարթնում ա, տենում ա, որ հիվանդ ա: Էլ մըխելի էլ գալիս ա, որ մոտենում ա դևի ամարաթին, ծտերի մընի գլուխն էլ ա պոկում, դեր ընդեղ՝ «Վա՛յ մերա» ա կանչում:

Հարնախսա՝ Ասլան-բալասին հասնում ա դևի ամարաթը, ծիտը ձեռին բռնած: Դևի աչքովն ա ընկնում Ասլան-բալասու ձեռի ծիտը, ասում ա.— Ա՛յ տղա, էդ ծիտը մի ինձ տու կուլ տամ, է՛: Ասլան-բալասին ասում ա.— Սատկիր դժոխքի փայ ի՛լ, անիծված դև, ա ո՞քու ծիտը:

Ասում ա, վրա իրեք ծտի գլուխն էլ ա պոկում, դեն գցում: Եղնա գուրզը քաշում ա ու տուր թե կտաս, դևին թիքա-թիքա ա անում: Նոր Դունյա-գյոզալին մի դայդով բարով ա անում.— Դե՛, աննման սիրուն ախչիկ, հըմի ախպորս աչքը ջուր կըտրեց, էլ գուր տեղը եղ չընկնենք, էս դևի ունեցած-չունեցածի տեղը շանց տու, հվաքենք գնանք:

Դունյա-գյոզալը Ասլան-բալասուն տարավ դևի ձիանոցը, իրեք ծովի ձի ուներ՝ դուս բերին, ինչ դդար խազինա ուներ՝ բիրադի հավաքեցին: Եղնա Դունյա-գյոզալն ասավ.— Գիտեմ ոչ էս պատումն ինչ կա, էն անիծված դեր էս պատին շատ պաշտեր:

Ասլան-բալասիս էդ իմացավ թե՛ չէ, լումը վե կալավ ու էդ պատը սկսեց քանդել: Մի քանի հետ թրխկացրուց, մին էլ տեհավ, ա յ քի հրաշք, հրես էս պատիցը մի դուռ բաց էլավ, մի արաբ միջիցը դուս էկավ:

— Հե՛յ, հե՛յ,— ասավ,— իսան-օղլի, իմ աղին էդ ինչ ես արել: Ասավ ու ձեռները գցեց Ասլան-բալասու յախա-մախեն հըվըքորեց: Ասլան-բալասին էլ նրանը: Էրկու աժդրհեն ըսկսեցին գետինը վարացնիլը, հընենց որ նրանք որ իրար քաշեին՝ գետինը ժաժ գեր, նրանց աստամների դըռճըտացնիլը մարդի անգաջնի խլացներ, համա աստոծը մեր Ասլան-բալասու կուռն ա

ըլում, էնա էն արաբին դունըդուրմա թիկն ա քաշում ու վեր ունում գլխի վրա թըրը՝ մը, տալի գետնովը:

Եդնա Ասլան-բալասին գուրզը վեր ա ունում, որ դրան թիքա-թիքա անի, հըլե մին էլ էն ա տենում, որ էդ արաբը դոշը բաց արած, ծծերը դուս ածավ, գլխի խորխը հանեց դեն գցեց, թե. «Ես քունն եմ, դու՝ իմ, այ աժդահա տղամարդ, ինձ սըլպանիլ մի»:

Ասլան-բալասին եփոր տեհավ էդ ախչկանը, խելքը գլխիցը թռավ: Ախչիկ եմ ասում, է՛, նանը մինն էլ պտեր բերի: Նրա շիմշատ բոյը, նրա չալչալ աչքերը, նրա սպիտակ էրեսը, նրա ոսկեթել մազերը, երկար վիզը, սատափ ատամնին, հարնախսա՝ մարդու խելքը կտաներ: Չընենց որ արևին ասեր՝ դուրս մի գալ, ես աշխարքին լիս կտամ:

Համա գիտե՞ք, տղերք ջան, էն ախչկա անումը ըլել ա Արաբի- գանգի, դու մի ասիլ Դունյա- գյոզալիցը թաքուն էդ Արաբու- գանգուն էլ ա էդ դեր փախցրած էլել՝ էն պատումը պահած, որ էն պատը ընենց պաշտելիս ա ըլել: Էն ա իրեքն էլ վեր են կենում, ճամփա ընկնում դրբա օխտն ախպոր ամարաթը:

Շատ են գալի, թե քիչ են գալի, ճամփին խաբար են դարկում օխտն ախպոր վրա, թե. «Գնացեք ասեք, որ Ասլան-բալասին գալիս ա, Դունյա-գյոզալին էլ ա բերում, Արաբի-գանգուն էլ վերեք ա բերում:

Օխտն ախպերը հըլե իմանում են Ասլան-բալասու գալը թե չէ, սիրտները պատռում ա. դու մի ասիլ էդ նաչար թաքավորի տղի գլխիցը կանանչի են քաղելիս էլել:

Չըլե էդ խաբար իմանում են թե չէ, գալիս են թաքավորի տղի ոտներն են ընկնում. «Վա՛յ, քեզ մատաղ, մեր աչքի լիս, մեր ազիզ փեսա, ախպերդ գալիս ա, մենք քեզ հետ հանաք անեինք, դուն նրան բան չի խաբար տաս»:

Չըմա գիտեք, տղերք ջա՛ն, կատվի խաղը մկան մահ ա. օխտն ախպերը նրա հետ խաղ անեին, համա նրան մահ տեին: Համա թաքավորի տղեն իմանում ա ախպոր գալը, չիմ մտահան ա անում: Օխտն ախպոր հետ վեր են կենում Ասլան-բալասու աղաքը գնում: Մին էլ էն են տենում հրեն Ասլան-բալասին գալիս ա: Դրանք գնում են նրա ճտովն ընկնում, ուրախանում, աշխարովը մին ըլում:

Եդնա էդ օխտը ախպերը էդ թիկունը էլ պախրա, էլ կխտար, ֆորս են անում, բերում մի լավ քեֆ են անում:

Էն էքսը Ասլան-բալասին ասում ա օխտն ախպորը.— Դե՛հ, հըմի ինչ էք ասում, էկա ձեր կովատեղը, դևերին ջարդեցի, ձեզ ազատեցի, դևը Դունյա-գյոզալին փախցրեց՝ գնացի նրան էլ թիքա-թիքա արի, Դունյա-գյոզալին բերի, հըմի ի՞նչ էք ասում, է՛ս ձեր քիրը, էս էլ դուք, է՛ս էլ իմ ախպերը. հըմի ձեր քիրը իմ ախպորն էք տալի՞, թե՛ չէ: Ես ձեզ դանչանք անելու բան չունեմ, ասում եմ ձեր կամքովը տաք, թե չէ աստո՞ժ սաղ պահի իմ կուռը, մին էլ իմ գուրզը, գուրզրս կքաշիմ, քառասուն դևի հարինքը ձեզ վրա կգձեմ:

Օխտն ախպերը էս իմանում են թե չէ, սիրտները պատռում ա, ասում են.— Ասլան-բալասի ջա՛ն, մեր քիրը չէ, մեր ջանն էլ քի դուրբան ըլի, ուզում ես մենք էլ դրա հետ գանք քի դուլլուդ անենք: Համա գիտես, Ասլան-բալասի ջան, ըսօր կաց, գնանք ֆորս իրար հետ, ֆորսի միս բերենք, թիկունն էլ մի լավ քեֆ անենք, ռավոտը վաղ գնացեք ձեր ճամփեն:

Դու մի ասիլ էս օխտն ախպոր միտքը խաբար ա. մերու միջին մի դևերի բնակարան կա, տանում են Ասլան-բալասուն մի սարի գլուխ հանում, եդնա ասում թե. «Ասլան-բալասի, դու էս մատնովը գնա, մենք էլ էս մատնովը կգանք, էս օրթալըդումը ինչ որ ֆորս ըլի, չիմ կբռնենք»:

Ասլան-բալասին ասում ա.— Լավ:

Մըխերի ցածանում ա թե չէ՝ մին էլ էն ա տենում, ըվատա հարուր դն դըբա իրեն են գալի: Ասլան-բալասին էդ տենում ա թե չէ, մի ծառ ա տըկոապոկ անում, ճղքներից է՛լ առչ ասես, է՛լ պախրա, է՛լ կխտար, է՛լ արծիվ, է՛լ ալապստրակ, է՛լ աղվես, ես ինչ գիտեմ՝ հազար ու մին ջանլու բռնտտում ու ճղքներիցը կախ անում, էդ ծառի ուսին դնում, գուրգն էլ մի ձեռին բռնում, դըբա էդ դները աղաք գնում ու ձեն տալի.— Է՛, վախլուկ ալապստրակնի, կաղնեցեք, ուր էք փախչում, կաղնեցեք գամ ձեր մենձ թիքեն անգանձներդ թողում:

Եդ են մտիկ տալի դները, ի՛նչ են տենում, մի անիրավի մինը հրես մի սար շըլակած իրանց եղնա վագ ա տալի: Էդ դրանք տենում են թե չէ, էլ ծառ ու քար չեն հարցընում, փախչում են, ո՛նց են փախչում, որ գյուլլա գցեիր՝ նրանց հասնիլ չէր: Դները գնում են օխտն ախպորը տալի անց կենում. օխտն ախպերն էլ նրանցե բեթար սարսաֆոտած փախչում են դըբա իրանց ամարաթը:

Ասլան-բալասին էլ էդ ծառը ուսին դրած, էդ ֆորսերը վրիցը կախ արած, գնում ա օխտն ախպոր ամարաթը:

Դռնիցը ձեն ա տալի.— Չէ՛յ, իմ ախպերտինք, դուս էկեք, ֆորս եմ բերել, բեջարեցեք իրիկնահացի թաղարեքը տեհեք:

Ախպերտինքը դուս են գալի, ահ ու դողով ֆորսերը տուն են տանում, իրիկնահացը պատրաստում: Իրիկնահացը ուտում են ու քնում: Ռավոտը ծեգելահանա Ասլան-բալասին վեր ա կենում:

— Դե՛հ,— ասում ա,— ասացեք ախպերտինք ջա՛ն, ըսօր ի՞նչ մհանա էք ուզում անել, էլ ես կարող չեմ երկար մնալ, մհանա-շհանեն էլ կտրեց, հըմի թե մեզ ճամփա էք անում՝ ճամփա արեք, թե չէ՝ գուրգրս վեր եմ ունում, ձեզ հետ հաշիվս վերջացնեմ:

Էլ օխտն ախպերը կարացին ոչ ջուղաբ տալ, ասին.— չազիր ենք ձեզ ճամփա անելու:

Ձիանը դուս քաշեցին, Դունյա-գյոզալին ու Արաբի-զանգին, Ասլան-բալասին ու թաքավորի տղեն ճամփա ընկան դըբա իրանց քաղաքը: Օխտն ախպերն էլ բերին դրանց իրանց սահրաթը անց կացրին: Հարնախսա՝ դրանք էկան իրիկնահացի վախտը իրանց քաղքին մոտեցան:

Ասլան-բալասին ասավ թաքավորի տղին.— Ախպեր ջա՛ն, մենք որ ես բեվախտին զընանք, թաքավորը հենց կգիտենա ես ախչկերանցը գտել ենք: Քշերս ես հին ջղացում վեր գանք, կենանք, խաբար անենք թաքավորին, թե Ասլան-բալասին ու քու տղեն գալիս են, Դունյա-գյոզալին ու մին էլ Արաբու-զանգուն բերում են, իրավունք ես տալի՞, որ քաղաքը մտնենք: Էն ա ըտենց միտք արին ու ըտենց էլ արին:

Կես քշերի վախտը թաքավորի տղեն, Դունյա-գյոզալն ու Արաբի-զանգին քնել էին, համա Ասլան-բալասին զարթուն դրառուլ աներ: Մին էլ էն տեհավ, որ ջղացի լիսածակովը երկու աղունիկ տուն մտան: Դրանք խորխները հանեցին, մինը դառավ մի պառավ կնիկ, մինը դառավ մի աղափ ախչիկ:

Աղափ ախչիկն ասավ պըռավին.— Նանի՛:

Նա, թե.— Չա՛ ջանի:

— Գիտե՛ս, թաքավորը Ասլան-բալասու ու իրա տղի համա ինչեր ա հազրել:

— Ի՞նչ ա հազրել, բալա ջա՛ն:

— Խորոկնին դեղած ա, ձիանը կբերեն աղաքը՝ դեղած ա, սըկամի կբերեն՝ դեղած ա:

Հարնախսա՝ ըսօր դրանց հմա ինչ որ բերեն՝ չիմ դեղած ա, որ Ասլան-բալասին ու թաքավորի տղեն կոտորվեն, Դունյա-գյոզալն ու Արաբի-զանգին մնան թաքավորին: Համա տես, նանի՛, ով որ ասի՝ քար դառնա:

Էս ասին ու էն սհաթը խորխները հազան, թռան գնացին:

Էն ռավոտը, աստծու բարի լիսը ընկնի ձեր օրին ու արևին. Ասլան-բալասուն էլ աստվածը նեղ տեղիցը ազատի: Վեր կացան Ասլան-բալասին իր հնկորտանցովը, ձիանուն նի էլան, դրբա քաղաք: Հենց քաղքի դրադը հասան թե չե, տեր աստվա ծ, ինչ թանթանեք դուս էկան, էլ գուռնա, դիոլ, էլ պարկապգուկ, էլ լավ-լավ խաղ ասողնի, տաղ ասողնի, դոշունը ճամփու էս դրադն ու էն դրադը կագնած, գովում են չիմն էլ Ասլան-բալասուն ու թաքավորի տղին: Մինը դրանց ձի ա բերում աղաքներուն, որ նի ըլին: Ասլան-բալասին գուրգը քաշում ա թե՛ «Ե՛ դ կաղնի»: Մինը միրք ա բերում, գլխովն ա տալի: Հարնախսա՝ գլուխներդ ինչ ցավացնեն, թաքավորի մի գաղին էլ տիրանում չեն:

Ասլան-բալասին իր հրնկորտանցովը գնում ա ջոկ ամարաթ, ընտեղ կենում ա էրկու տարի: Էդ էրկու տարու միջումը թաքավորի տղին ըլում ա մի ջուխտ ոսկիքանքուլ տղա: Թաքավորն էլ աստծու իրան օրը, արժանավոր մարդիկ ա դարկում, դրանց դոնաղ անում, դրանք գնում չեն: Օրերի մի օրը թաքավորի տղեն դնամաշ ա անում Ասլան-բալասուն.— Ա՛յ ախպեր ջան, էլ մեր հերը բա ընչով ուրախանա, որ էրկու տղա ունի, էրկու հարսն ունի, էրկու թոռն ունի, մընի էրեսն էլ ա տենում չի, մընի հետ էլ ա խոսում չի: Հըմի քեզ դանչանք, միննաթ եմ անում, քու դարդն ի՞նչ ա, որ թողում չես գնանք. էդ ինձ ասիլ պտիս:

Ասլան-բալասին ասավ.— Կասեմ, ախպեր ջա՛ն, հըմա կփոշմանես:

— Չէ՛, փոշմանիլ չեմ, ախպեր ջա՛ն: Քունն էն ա՛ ասե՛ս:

— Դե որ ասում ես հա՛, դե անգանջ արա՛ ասեմ: Էն ինչ մենք գեինք, էկանք քաղաքի վերի կռանը փլիկ ջղացումը որ քշերը կացանք միտդ ա՛ :

Թաքավորի տղեն ասավ.— Խի՞ չի միտս:

Ասլան-բալասին ասավ.— Դե որ միտդ ա, դեսը մտիկ:

Թաքավորի տղեն մտիկ տվուց, որ Ասլան-բալասու չկել ծընկնակոպերը քար ա դառել: Որ տեհավ էդ. գլխին ու ծնկներին վեր հաստեց.— Վա՛յ, ախպեր ջա՛ն, էլ մի ասիլ:

Ասլան-բալասին ասավ.— Չէ՛, պետք ա ասեմ: Ես ըսենց կիսաքար ինձ չարչարիլ չեմ: Ես որ ասեի՝ կփոշմանես, սրա համար ասեի:

Էն ա Ասլան-բալասին եղնուց ասում ա.— Դուք քնած իք, մին էլ տեհա էրկու աղունիկ ջղացի լիսածակովը ներս մտան: Խորխները հանեցին, մինը դառավ մի պառավ կնիկ, մինը դառավ ջահել աղջիկ: Ասլան-բալասին հընչկել կոնատակերը քար դառավ:

— Էնա, ախպեր ջան, ախչիկն ասավ. «Նանի», նա թե՛ «Հա ջանի». գիտե՞ս, թաքավորը Ասլան-բալասու մին էլ իրան տղի հմա ի՞նչ ա հազըրել, թե՛ կերակուր, թե՛ ջուր, թե՛ գինի, թե՛ արաղ, թե՛ ձի, վերջը ամեն բան դեղած ա, որ դրանք դեղվին ու կտորվին, որ Դունյա-գյոզալն ու Արաբի-զանգին մնան թագավորին: Համա, նանի՛, ով որ ասի՝ քար դառնա:

Թաքավորի տղեն մտիկ տվուց, որ Ասլան-բալասին դառել ա մի լեռ քար:

Թաքավորի տղեն, Դունյա-գյոզալն ու Արաբի-զանգին ըսկսեցին քշերն ու ցերեկ լաց ըլիլ, աստծուն աղոթք անիլ, մատաղնի մորթիլ, աղքատների փող բաշխիլ, ժամ ու պատարագ անել տալ, բալքա մնի խնդիրքը առ աստված հասնի, Ասլան-բալասին սաղանա: Համա իլլաճ չէլավ:

Հարնախսա՝ թաքավորի տղեն շատ որ փիքը արավ, ասավ.— Թե էս բանը Ասլան-բալասուն ջղացումն են ասե, գնամ ես էլ ընդի, աղոթք անեմ, մի ճար ըլի:

Ասավ ու գնաց: Քշերվա մի վախտը մին էլ էն տեհավ, որ ջաղացի լիսածակովը հրեն էրկու աղունիկ թոթոպե տուն մտան, խորխնին հանեցին, մինը դառավ մի պառավ կնիկ, մինը դառավ մի ջահել աղջիկ: Աղջիկն ասավ.— Նանի՛ :

Նա, թե.— Հա՛ ջանի:

— Գիտե՞ս Ասլան-բալասու դեղն ի՞նչ ա:

— Ի՞նչ ա, բալա ջա՛ն:

Թաքավորի տղեն որ իրան մի ջուխտ ոսկե քանքուլ տղեն մորթի, նրանց արնովը Ասլան-բալասու լեռ քարը լվանա, նա կսաղանա: Ասին ու խորխները հագան, թռան:

Թաքավորի տղեն թագադան աստծուն փառք տվուց, ուրախ-ուրախ վի կացավ իրանց ամարաթը վագ տվուց: Էնա ծեզը գեր: Դունյա-գյոզալին ու Արաբի-զանգուն ասավ.— Չիմն էլ գնացին ժամը, աղոթքն արին իմ ախպոր հըմա, իլլաճ չէլավ: Հըմի էլ դուք էրկուսդ գնացեք ժամը, բալի ձեր խնդիրքը առ աստոճ հասնի:

Նրանք դըբա ժամը ըղու էլան, թաքավորի տղեն դանակը վե կալավ իրան էրեխանց մինը ձեռին բռնեց, տարավ քար դառած Ասլան-բալասու վրա մորթեց, էն մորթած էրեխեն տարավ իր տեղը դրուց, թագադան էն մեկել էրեխին բերուց Ասլան-բալասու վրա մորթեց, էլի տարավ իրան տեղը: Մին էլ ի՞նչ տեսնա, տեր աստվա՛ճ, քարը պատռվեց, Ասլան-բալասին սաղ-սաղ միջիցը դուս էկավ:

Ուրախանա՛ք, ինչ ուրախացան:

Հենց էդ վախսոն էլ Դունյա-գյոզալը, մին էլ Արաբի-զանգին ժամիցը տուն էկան: Տեր աստվա՛ճ, ինչ տեսան, Ասլան-բալասին սղացել ա, ընկան դրա ճտովը, ի՞նչ ուրախութին արին, էլ կարալ չեմ թե ասեմ:

Հարնախա՛ս Դունյա-գյոզալը հարցրուց թաքավորի տղին թե՛ «Էս ո՞նց էլավ, որ մեր ախպերը սըղացավ»: Նա էլ նաղըլն արավ, ոնց որ ջաղացն էր գնացել, աղունիկների ասածը լսել էր ու կատարել:

Դունյա-գյոզալը ասավ.— Աղբատիխեր, բա խի՞ ինձ ժամը դրկեցիր, բեխանց կուռը, յա ոտն էլ ես կբռնեի, որ չըրչարվիլ չէին: Ասավ ու գնաց բեխանց կուշտը: Գնաց ի՞նչ տեհավ, էրեխեքը նոր զարթնել են, իրար հետ փոթի-փոթի խաղ են անում: Դունյա-գյոզալը էկավ թագավորի տղին ասավ.— Էդ խի՞ ես ինձ խաբում, ո՞ւր ա թե էրեխանցը մորթե՛լ ես:

Չիմն էլ վագում են էրեխանց կուշտը, տեսնում են, որ էրեխեքը սաղ-սալամաթ, աստծուն փառք են տալի ու ուրախանում են:

Էն էքսի օրը Ասլան-բալասին էդ քաղաքումը յասավլինին ման ածիլ ա տալի, որ չիմդ էլ թոփ էլեք փըլան տեղը, որ դատաստան պետք ա անեմ: Թաքավորին էլ ասավ.— Մեզ հըմա թաղարեք տե՛ս, դիր էն խալխի մեչ:

Թաքավորը որ իմացավ, շատ ուրախացավ, էլի եղված կերակուրնի հագրեց, որ տղեն ու Ասլան-բալասին ուտեն, կոտորվին:

Եփ որ թաղարեքն էկավ հագրած տեղը, խալխը չիմ թոփ էլան, թաքավորն էլ էկավ, որ իրան աչքի դաքին Ասլան-բալասին դատաստան պտի անիլ:

— Բե՛ր,— ասավ.— քու՛ մեզ հմա հագրած խորակը:

Բերին խորակնին: Ասլան-բալասին ասավ.— Էլլի՛ գ, ջամ-ջամհա՛թ, լավ տեհ՛եք, ես էսօր արդար դատաստան պտի անեմ: Էս թաքավորը, որ մեզ համա խորակ ա հագիր արել, առաջ պետք ա ինքը ուտի:

Դա գուրզը վե կալավ.— Տենո՞ւմ ես,— ասավ,— թաքավոր, քաղաքդ քարուքանդ կանեմ, ասում եմ՝ կի՛, կի՛:

Էդ վախսը թաքավորի կշտին կագնած էր իրան նագիրը: Նագիրն ասավ.— Թաքավո՛րն ապրած կենա, միտդ ա՞ գալի, որ ես ու դու գնացինք ֆլան մենձ գեղը, ֆլան նախըջու տունը դոնաղ ընկանք, որ նախըջու կնիկն էլ մեր դարդին դարման արավ, էն ինչ ես քեզ ասի, թե՛ էդ նախըջու կնկա խըտըտի ըրեխեն մենձանալ պտի, քու թախտը քարուքանդ անիլ,

թաքավորութինը տիրիլ, միտդ ա գալի՛:

Թաքավորն ասավ.— Միտս ա գալի:

— Դե որ միտդ ա գալի, էդ Ասլան-բալասին նախըջու տղեն ա:

Հենց էդ խոսքումը կտաղեց Ասլան-բալասին,— Կե՛ր, թաքավո՛ր, քու ձեռովը մեզ հմա հագրած խորակը, թե չե՛ թախտդ քարուքանդ եմ անում:

Իլլաճը կտրվեց թաքավորի, մի էրկու գդալ վի կալավ ու կերավ: Դեռ պատառը կուլ չգնացած, անիծած չար թաքավորը իրան էլլիզի դաքին վերու արչի պես սըտակեց:

Ասլան-բալասին ասավ.— Էս թաքավորը էս էրկու տարի ա մեզ հմա էս թավուր խորակնի ա հագլիր անում, ըսօր թմամվեց դրա ճկատի գիրը, ու իրան էփած խորակը, որ մենք պետք ա ուտեինք, իրան ուտացըրինք: Գնաց դժոխքը, սատանի փայ էլավ: Տեհե՛ք, սա էր իմ արդար դատաստանը: Էս սրհաթին գուրգս կըքաշեմ սըրա թախտը քարուքանդ կանեմ, տեղը թագեն կշինեմ ու իրան տղին տեղը թաքավոր կշինեմ:

Ասավ ու գուրգը քաշեց, թաքավորի թախտը քարուքանդ արավ, որ չիմ դեղած էր:

Էն էքսը թագա ուստենի կանչեց, թագա թախտ շինիլ տվուց, թաքավորի տղին նստացրուց թախտին, ինքն էլ հետը քառասուն օր, քառասուն քշեր իրանց ունեցած դոշունովը կեր ու խում արին, թաքավորի տղին թագա հրսանիք արին, Դունյա-գյոզալի հետ պսակեցին, Ասլան-բալասուն էլ թագա հրսանիք արեցին Արաբի-գանգու հետ:

Նրանք շատ տարիներ իրանց օրերը ուրախ անցկացրին:

Չարն ընդի, բարին ըստի:

Ըստվածնե իրեք խնձոր վեր գա. մինը՝ հեքիաթ ասողին, մինը՝ անգաջ անողին, մինն էլ՝ ալամ աշխարքին: